Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված Կանոնակարգ (ԵՀ) No 1166/2008

Գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունները, գյուղատնտեսական արդյունաբերության մեթոդները և փոփոխված Խորհրդի Կանոնակարգը (EEC) 571/88

(Համապատասխանում է EEA –ին)

Եվրամիության խորհրդարանը և Եվրոպական խորհուրդը,

հաշվի առնելով Եվրոպական Համայնքը հիմնադրող միջազգային պայմանագիրը, և մասնավորապես Հոդված 285(1)-ը,

Եվրահանձնաժողովի առաջարկը,

Գործելով միջազգային պայմանագրի([1]) Հոդված 251-ում սահմանված ընթացակարգի համաձայն,

Որտեղ՝

(1) ԵՄ Խորհրդի 1988, փետրվարի 29-ի Կանոնակարգ No 571/88, որը վերաբերում է Եվրոպական Համայնքի գյուղացիական տնտեսությունների կառուցվածքների հետազոտության կազմակերպմանը, որն ապահովում է Համայնքի հետազոտության ծրագիրը՝ մինչ 2007 թվականը գյուղացիական տնտեսությունների վիճակագրությունը ապահովելու համար:

(2) 1966/67 թվականներից Համայնքի հիմքի վրա իրականացվող գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտության ծրագիրը, պետք է շարունակվի Համայնքի մակարդակով ուղղությունները հետազոտելու համար: Այն ավելի հստակ դարձնելու համար Կանոնակարգ No 571/88 պետք է փոխարինվի սույն կանոնակարգով:

(3) Գյուղացիական տնտեսությունների հիմնական ռեգիստրները և ընտրանքային հետազոտության շերտավորման համար պահանջվող այլ տիպի տեղեկատվությունը արդիականացնելու նպատակով, Համայնքում գյուղացիական տնտեսությունների համատարած հաշվառումն անհրաժեշտ է իրականացնել առնվազն յուրաքանչյուր տասը տարին մեկ: Վերջին համատարած հաշվառումը նախքան սույն Կանոնակարգի ընդունումը տեղի է ունեցել 1999/2000 թվականներին:

(4) Անհրաժեշտ է հավաքագրել գյուղական համայքների զարգացման հետ կապված միջոցների իրականացման տվյալները, ինչպես սահմանված է 2005 թվականի սեպտեմբերի 20-ի (ԵՀ) Խորհրդի Կանոնակարգ No 1698/2005-ով, կապված Գյուղական Համայնքների Զարգացման համար Եվրոպական Գյուղատնտեսական Հիմնադրամի (EAFRD) ([3]) կողմից գյուղական համայնքների զարգացման հետ:

(5) 2006 թվականի դեկտեմբերի 19-ի գյուղատնտեսական միջավայրի ցուցանիշների հետ կապված իր եզրակացություններում Խորհուրդը անհրաժեշտ է համարում գյուղատնտնեսական աշխատանքների համար համադրելի տվյալների առկայությունը, համապատասխան աշխարհագրական մակարդակի վրա՝ ընդգրկելով ողջ Համայնքը: Խորհուրդը պահանջել է, որպեսզի Հանձնաժողովը միջոցներ նախաձեռնի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի ([4]) Համայնքային Հաղորդակցության վերաբերյալ, որը ներառում է վիճակագրական տվյալների արտադրանքը՝ մասնավորապես կապված տնտեսությունների կառավարման փորձի և դրանց միջոցների օգտագործման հետ:

([1]) 2008 թվականի մայիսի 21-ի Եվրոպական խորհրդարանի տեսակետը (որը դեռ չի հրապարակվել Պաշտոնական ամսագրում) և 2008 թվականի հոկտեմբերի 20-ի ԵՄ Խորհրդի որոշումը:

([2]) OJ L 56, 2.3.1988, պ. 1.

([3]) OJ L 277, 21.10.2005, պ. 1.

([4]) «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության վրա բնապահպանական ազդեցության ինտեգրման մոնիթորիգնի նպատակով գյուղատնտեսական միջավայրի ցուցանիշների մշակումը» վերնագրով

(6) Անհատական տնտեսությունների գծով տարբեր գյուղատնտեսական արտադրական մեթոդների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության պակաս գոյություն ունի: Ուստի, կարիք կա բարեփոխելու գյուղատնտեսական արտադրական մեթոդների վերաբերյալ տեղեկատվության հավաքման գործընթացը, որը կապված է գյուղացիական տնտեսությունների կառուցվածքային տեղեկատվության հետ, որի նպատակն է ապահովել գյուղատնտեսական միջավայրի քաղաքականության համար լրացուցիչ վիճակագրություն և բարելավելու գյուղատնտեսական միջավայրի ցուցանիշների որակը:

(7) Բոլոր Անդամ պետություններից գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի վերաբերյալ համադրելի վիճակագրությունը շատ կարևոր է Համայնքում գյուղատնտեսական քաղաքականության մշակումը որոշելու համար: Այդ պատճառով, պետք է օգտագործվեն ստանդարտ դասակարգումներն ու ընդհանուր սահմանումները, այնքան որքան հնարավոր է հետազոտության բնութագրի համար:

(8) 2010 թվականին տնտեսությունների կառուցվածքի հետազոտության իրականացումը և 2011 թվականին բնակչության տասնամյա մարդահամարը անդամ պետությունների վիճակագրական ռեսուրսների համար մեծ բեռ կդառնա, եթե այս երկու գլխավոր հետազոտությունների դաշտային աշխատանքների ժամանակահատվածները համընկեն: Այս իսկ պատճառով պետք է լինեն զիջումներ, որպեսզի անդամ պետություններին հնարավորություն տրվի 2009 թվականին իրականացնել տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունը:

(9) Համայնքի վիճակագրության վերաբերյալ ([5]) Խորհրդի Կանոնակարգը (ԵՀ) No 322/97, փետրվարի 17, 1997 թվական, կազմված է սույն Կանոնակարգի շրջանակի դրույթներից, մասնավորապես կապված անաչառության ստանդարտների համապատասխանության, վստահության, պատշաճության, ծախսարդյունավետության, վիճակագրական գաղտնիության և թափանցիկության հետ: Խորհրդի Կանոնակարգը No 1588/90 (Euratom, EEC), 1990 թվականի հունիսի 11, Եվրոպական Համայնքների Վիճակագրական Գրասենյակին ([6]) վիճակագրական գաղտնիության ենթակա տվյալների փոխանցման վերաբերյալ, կազմում է սույն Կանոնակարգի համաձայն տրամադրված գաղտնի վիճակագրական տվյալների փոխանցման և պաշտպանության համար շրջանակներ՝ ապահովելու համար այն, որ ոչ մի անօրինական բացահայտում չի եղել, կամ տեղի չի ունեցել տվյալների օգտագործում՝ ոչ վիճակագրական նպատակներով, երբ թողարկվում և տարածվում է Համայնքի վիճակագրությունը:

(10) Հանձնաժողովի կողմից գյուղացիական տնտեսության տեղանքի օգտագործումը պետք է սահմանափակվի վիճակագրական վերլուծությամբ և պետք է բացառվեն ընտրաքների կազմումը և հետազոտությունների իրականացումը: Անհրաժեշտ է ապահովել տվյալների գաղտնիության պահպանումը՝ սահմանափակելով տեղանքի պարամետրերի ճշգրտությունը և վիճակագրությունը հրապարակելու ժամանակ համապատասխան ձևով համախմբել տվյալները:

([5]) OJ L 52, 22.2.1997,պ.1.

([6]) OJ L 151, 15.6.1990, պ.1.

(11) Խորհրդի Կանոնակարգը (EEC) No 3037/90 ([1]) հիմնել է տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգումը Համայնքում:

(12) Եվրոպական խորհրդարանի Կանոնակարգի (ԵԽ), No 1059/2003, և 2003 թվականի մայիսի 26-ի վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանուր դասակարգման հիմնման վերաբերյալ Խորհրդի Կանոնակարգի (NUTS) ([2]) համաձայն տարածքային միավորները պետք է սահմանվեն NUTS դասակարգման համապատասխան:

(13) Ռեսպոնդենտների և անդամ պետությունների համար տվյալների հավաքագրման ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով, ընտրանքային հետազոտությունների հնարավորությունը և վարչական ռեսուրսները պետք է ապահովված լինեն:

(14) Հետազոտություններ իրականցնելու համար զգալի ֆինասնական միջոցներ են պահանջվում թե անդամ պետություններից, և թե Հանձնաժողովից տարիներ շարունակ, որի զգալի մասը օգտագործվելու է Համայնքի պահանջները բավարարելու նպատակով:

(15) Հայտնի է, որ գյուղացիական տնտեսությունների արբանյակային ճանաչման և նույնականացման պահանջները շատ անդամ պետություններում իրենցից ներկայացնում են զգալի մեթոդաբանական և տեխնիկական դժվարություններ:

(16) Հատուկ դրույթ պետք է պատրաստվի Համայնքի սուբսիդիայի համար՝ հետազոտությունների սույն ծրագրին աջակցելու նպատակով ըստ 2005 թվականի հունիսի 21-ի Խորհրդի Կանոնակարգի, (ԵԽ) No 1290/2005, Եվրոպական Գյուղատնտեսական Երաշխավորման Հիմնադրամի միջոցով համընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության ([3]) ֆինանսավորման համար:

(17) Սույն Կանոնակարգը սահմանում է ծրագրի ողջ տևողության ընթացքում ֆինանսական փաթեթը, որ կազմում է տարեկան բյուջետային ընթացակարգի ընթացքում բյուջետային լիազորությունների համար առաջնային տեղեկագիր՝ ըստ բյուջետային կարգի և հաստատուն ֆինանսական կառավարման([4]) մասին Եվրոպական խորհրդարանի, Խորհրդի և Հանձնաժողովի միջև 2006 թ.-ի մայիսի 17-ին կնքված Միջինստիտուցիոնալ Համաձայնագրի 37–րդ կետի:

(18) Քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, որն է մասնավորապես Համայնքի գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի և գյուղատնտեսական արտադրության մեթոդների վերաբերյալ վիճակագրության պարբերական թողարկումը, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից, ուստի՝ սույն Կանոնակարգի բովանդակության համաձայն, կարող է ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով: Համայնքը կարող է միջոցառումներ ձեռնարկել ըստ սուբսիդավորման սկզբունքի, ինչպես սահմանվում է Միջազգային Պայմանագրի Հոդված 5-ում: Ըստ համամասնության սկզբունքի, ինչպես սահմանված է սույն Հոդվածում, սույն Կանոնակարգը չի անցնում տվյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ շրջանակի սահմանները:

([1]) *OJ L 293, 24.10.1990, պ.1*

([2]) *OJ L 154, 21.6.2003, պ.1*

([3]) *OJ L 209, 11.8.2005, պ.1*

([4]) *OJ C 139, 14.6.2006, պ.1*

(19) Սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է կատարվեն համաձայն Խորհրդի Որոշման, 1999/468/ԵԽ, առ 28 հունիսի 1999, սահմանելով Հանձնաժողովի կողմից ստանձնած լիազորությունների իրականացման ընթացակարգերը ([5]):

(20) Մասնավորապես, Հանձնաժողովը պետք է լիազորված լինի սահմանելու համար անասնագլխաքանակի միավորների համար գործակիցները, բնութագիրը և ընդունելու համար սույն Կանոնակարգի հավելվածները: Քանի որ այդ միջոցառումները համընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են լրացնելու համար սույն Կանոնակարգի ոչ հիմնական տարրերը՝ համալրելով դրանք նոր ոչ հիմնական տարրերով, դրանք պետք է կատարվեն ըստ կանոնակարգով սահմանված ընթացակարգի մանրակրկիտ ուսումնասիրությամբ՝ համաձայն 1999/468/ԵԽ Որոշման Հոդված 5(ա)-ի:

(21) Գյուղատնտեսական Վիճակագրության Կոմիտեի, որը հիմնադրվել է Խորհրդի 72/279/EEC([6]), Որոշմամբ խորհրդակցությունից հետո՝

Ընդունվեց սույն Կանոնակարգը:

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Բովանդակություն

Սույն Կանոնակարգը հիմքեր է սահմանում գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի վերաբերյալ համադրելի Համայնքային վիճակագրության մշակման և գյուղացիական տնտեսությունների արտադրության մեթոդների հետազոտության համար:

Հոդված 2

Սահմանումներ

Սույն Կանոնակարգի նպատակների համար, պետք է կիրառվեն հետևյալ սահմանումները՝

(ա) <<Գյուղացիական տնտեսություն>> կամ <<տնտեսություն>>, նշանակում է եզակի միավոր, ինչպես տեխնիկապես այնպես էլ տնտեսապես, որն ունի եզակի կառավարում և Եվրոպական Միության տնտեսական տարածքում իրականացնում է գյուղատնտեսական գործունեություններ, ինչպես նշված է Հավելված I –ում՝ որպես իր առաջնային կամ երկրորդական գործունեություն:

(բ) <<անասնապահական միավոր>> նշանակում է ստանդարտ չափման միավոր, որը թույլ է տալիս անասնապահական տարբեր կատեգորիաների միավորում՝ որպեսզի հնարավոր լինի դրանք համեմատել: Անասնապահական միավորները սահմանվում են հիմք ընդունելով առանձին կենդանիների կատեգորիաների անասնակերի պահանջները, որի համար պետք է ընդունվի գործակից՝ կարգավորվող ընթացակարգերի ստուգման համաձայն, ինչպես նշված է Հոդված 15 (2)–ում:

(գ) <<ընտրանքային հետազոտությունները>> դրանք այն վիճակագրական հետազոտություններն են, որոնք հիմնված են շերտավորված պատահական ընտրանքի վրա, և նախատեսված են տրամադրել ներկայացուցչական վիճակագրություն գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ՝ տարածքային և ազգային մակարդակով:

(դ) <<շրջան>> նշանակում է NUT 2 տարածքային միավոր՝ ինչպես սահմանված է No 1059/2003 Կանոնակարգում (ԵՄ):

(ե) <<տնտեսության գտնվելու վայրը>> դա լայնության և երկարության կոորդինատներն են 5 ռոպեի կտրվածքում, որոնք չեն ենթարկվում առանձին տնտեսության անմիջական նույնականացմանը: Եթե լայնության և երկարության տեղակայությունը պարունակում է միայն մեկ գյուղացիական տնտեսություն, ապա այդ տնտեսությունը կվերագրվի հարակից տնտեսության հետ, որը պարունակում է առնվազն մեկ այլ գյուղացիական տնտեսություն:

---

(5) OJ L 184, 17.7.1999, պ.23

(6) OJ L 179, 7.8.1972, պ. 1

Հոդված 3

Ընդգրկում

1. Սույն Կանոնակարգում նշված հետազոտությունները պետք է ընդգրկեն՝

(ա) գյուղացիական տնտեսություններ, որտեղ անասնապահության համար օգտագործվող գյուղատնտեսական տարածքը մեկ հեկտար կամ ավելին է:

(բ) գյուղացիական տնտեսություններ, որտեղ անասնապահական տնտեսության համար օգտագործվող գյուղատնտեսական տարածքը 1 հեկտարից քիչ է, եթե այդ տնտեսությունները արտադրում են որոշակի չափաբաժին վաճառքի համար կամ եթե իրենց արտադրական միավորը գերազանցում է որոշակի ֆիզիկական շեմը:

2. Ինչևէ, Անդամ Պետությունները, որոնք օգտագործում են մեկ հեկտարից ավելի տարածքի հետազոտության շեմ, պետք է ամրագրեն այս շեմը այն աստիճանի վրա, որը միայն բացառում է ամենափոքր գյուղացիական տնտեսությունները, որոնք բոլորը միասին զբաղեցնում են համատեղ օգտագործման գյուղատնտեսական հողատարածքի 2 % կամ ավելի քիչ տարածք, բացառությամբ՝ համատեղ հողի և անասնապահական տնտեսությունների ընդհանուր թվի 2% կամ պակաս:

3. Ամեն դեպքում, բոլոր գյուղացիական տնտեսությունները, որոնք հասնում են Հավելված II նշված ֆիզիկական շեմերից որևէ մեկը, պետք է ապահովված լինեն ընդգրկումով:

Հոդված 4

Տվյալների աղբյուրները

1.Անդամ պետությունները պետք է օգտագործեն Ինտեգրված Ադմինիստրատիվ և Հսկողության Համակարգի տեղեկատվությունը, սահմանված համաձայն Կանոնակարգի (ԵԽ) No 1782/2003 ([1]), եղջերավոր անասունների նույնականացման և գրանցման համար համակարգը, որը սահմանված է Կանոնակարգում (ԵԽ) No 1760/2000 ([2]) և օրգանական տնտեսությունների ռեգիստրները՝ հիմնված ըստ Կանոնակարգի (ԵԽ) No 834/2007([3]): Տրամադրված տեղեկատվությունը ունի առնվազն այնպիսի որակ, ինչպիսին վիճակագրական հետազոտություններից ստացված տեղեկատվությունը: Անդամ պետությունները կարող են նաև օգտագործել ադմինիստրատիվ աղբյուրները՝ կապված գենետիկորեն փոփոխվող մշակաբույսերի մշակման հետ և հատուկ գյուղական համայքների զարգացման միջոցառումների հետ, որոնց մասին գրված է Հավելված III-ում:

([1]) Խորհրդի Կանոնակարգը (ԵԽ) No 1782/2003, 2003 թվականի սեպտեմբերի 29, հիմնելով ընդհանուր կանոններ ուղղակի աջակցության սխեմաների համար ըստ ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության և հիմնելով որոշակի աջակցության սխեմաներ ֆերմերների համար (OJ L 270, 21.10.2003, պ.1):

([2]) Կանոնակարգ (ԵԽ) No 1760/2000, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի, 2000 թվականի հուլիսի 17-ի, որով սահմանվում է խոշոր եղջերավոր անասունների նույնականացման և գրանցման համակարգը, և տավարի մսի ու տավարի մսամթերքի պիտակավորումը (OJ L 204, 11.8.2000, պ. 1):

([3]) Խորհրդի Կանոնակարգ (ԵԽ) No 834/2007, հունիսի 28, 2007 թվական, օրգանական արտադրությունը և օրգանական մթերքի պիտակավորումը և փոփոխված Կանոնակարգը (EEC) No 2092/91 (OJ L 189, 20.7.2007, պ. 1):

2. Եթե անդամ պետությունը որոշում է օգտագործել ադմինիստրատիվ աղբյուրը, այլ ոչ թե այն ինչը սահմանված է պար. 1-ով, անդամ պետությունը պետք է նախապես տեղեկացնի Հանձնաժողովին և պետք է տրամադրի կիրառելի մեթոդների վերաբերյալ մանրամասներ, ինչպես նաև ապահովի այս ադմինիստրատիվ աղբյուրից ստացվող տվյալների որակը:

Հոդված 5

Ճշգրտության պահանջները

1. Ընտրանքային հետազոտություն իրականացնող անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կշռված հետազոտության արդյունքները վիճակագրորեն ներկայացուցչական լինեն գյուղացիական տնտեսությունների համար յուրաքանչյուր տարածաշրջանում, և պատրաստված լինեն ճգրտության պահանջների համաձայն, որոնք սահմանված են Հավելված IV-ում:

2. Պատշաճ ձևով արդարացված դեպքերում Հանձնաժողովը պետք է թույլ տա անդամ պետություններին հատուկ տարածաշրջանների համար պարագրաֆ 1-ով սահմանված ճշգրտության պահանջներից կատարել բացառություններ:

ԳԼՈՒԽ II

Գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի վերաբերյալ վիճակագրությունը

Հոդված 6

Տնտեսությունների կառուցվածքի հետազոտություն

1. 2010, 2013 և 2016 թվականներին անդամ պետությունները պետք է իրականացնեն գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտություն, այսուհետ՝ «տնտեսությունների կառուցվածքի հետազոտություն»:

2. Տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունը 2010 թվականին կիրականցվի գյուղատնտեսության համատարած հաշվառման տեսքով: Այնուամենայնիվ, ընտրանքային հետազոտությունները կարող են օգտագործվել այլ գործողությունների բնութագրման համար, որոնք իրականացվում են աշխատուժի կողմից՝ Հավելված III, Մաս V (ii)-ի ցուցակի համաձայն:

3. Տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունները 2013 և 2016 թվականներին կարող են իրականացվել որպես ընտրանքային հետազոտություններ:

Հոդված 7

Հետազոտության բնութագիրը

1. Անդամ պետությունները պետք է տրամադրեն Հավելված III-ում գրված բնութագրի մասին տեղեկատվությունը:

2. Հանձնաժողովը կարող է, Հոդված 15(2)-ով սահմանված կանոնակարգի ընթացակարգին համապատասխան, ավելացնել Հավելված III- ում գրված բնութագրի ցանկը 2013 և 2016 թվականների տնտեսությունների կառուցվածքի հետազոտության համար:

3. Եթե անդամ պետությունը որոշում է, որ բնութագիրն ունի ցածր կամ զրո գերակշռություն, բնութագիրը կարող է հանվել տվյալների հավաքագրումից: Այդ անդամ պետությունը պետք է տեղեկացնի Հանձնաժողովին այդ օրացույցային տարում, որը նախորդում է հետազոտության տարուն, տվյալների հավաքագրումից հանված ցանկացած բնութագրի վերաբերյալ:

4. Բնութագրի սահմանումները պետք է ընդունվեն համաձայն կանոնակարգային ընթացակարգերի, որոնք ներկայացված են Հոդված 15(2)-ում:

Հոդված 8

Հաշվետու ժամանակաշրջան

2010, 2013 և 2016 թվականներին հետազոտությունների տարիներին տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների համար հաշվետու ժամանակաշրջանը պետք է սահմանվի հետևյալ կերպ՝

(a) Հավելված III-ով սահմանված հողի բնութագրի համար 12 ամսյա ժամանակահատվածը ավարտվում է հետազոտության տարվա մարտի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածով,

(b) Հավելված III-ում սահմանված անասնագլխաքանակի բնութագրի համար հաշվետու ժամանակահատվածն է հետազոտության տարվա մարտի 1–ից մինչև դեկտեմբերի 31-ը:

(c) Հավելված III-ում սահմանված աշխատուժի բնութագրի համար, 12 ամսյա ժամկետն ավարտվում է հետազոտության տարվա մարտի 1–ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածով,

(d) Հավելված III-ում սահմանված գյուղական համայնքների զարգացման միջոցառումների համար, երեք տարվա ժամկետն ավարտվում է հետազոտության տարվա դեկտեմբերի 31-ին:

Հոդված 9

Փոխանցում

1. Անդամ պետությունները պետք է փոխանցեն Հանձնաժողովին 2010 թվականից մինչև 2012 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածի համար տնտեսությունների կառուցվածքի հետազոտության մասին վավերացված տվյալները:

2. 2013 և 2016 տարիների տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների համար անդամ պետությունները պետք է փոխանցեն հետազոտության վավերացված տվյալները Հանձնաժողովին 12 ամսվա ընթացքում մինչև հետազոտության տարվա վերջը:

3. Գյուղական համայնքների զարգացման հետ կապված տվյալները, որոնք գրված են Հավելված III-ում և հիմնվում են վարչական գրանցումների վրա, կարող են առանձին փոխանցվել Հանձնաժողովին 18 ամսվա ընթացքում մինչև հետազոտության տարվա վերջը:

4. Տնտեսությունների կառուցվածքի հետազոտության տվյալները, որոնք փոխանցվել են Հանձնաժողովին, պետք է լինեն էլեկտրոնային տարբերակով և անհատական գյուղացիական տնտեսությունների մակարդակով:

5. Հանձնաժողովը պետք է որոշի հետազոտության տվյալների փոխանցման ձևաչափը:

6. Տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների տվյալները չպետք է օգտագործվեն Հանձնաժողովի կողմից ընտրանքներ կազմելու կամ հետազոտություններ կատարելու համար:

Հոդված 10

Ընտրանքային շրջանակներ

2013 և 2016 թվականների գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների ընտրանքային շրջանակը արդիականացնելու նպատակով, Անդամ պետությունները պետք է գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի համար պատասխանատու պետական մարմիններին տրամադրեն հասանելի տեղեկատվություն գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ, որոնք պարունակվում են ադմինիստրատիվ ֆայլերում և կազմվել են իրենց ազգային տարածքում:

ԳԼՈՒԽ III

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 11

Գյուղատնտեսական արտադրության մեթոդների հետազոտությունը

1. Անդամ պետութունները պետք է իրականացնեն հետազոտություն գյուղատնտեսական արտադրության մեթոդների վերաբերյալ, որոնք օգտագործվում են գյուղացիական տնտեսությունների կողմից: Այս հետազոտությունը կարող է իրականացվել, որպես ընտրանքային հետազոտություն:

2. Պատշաճ ձևով հիմնավորված դեպքերում, Հանձնաժողովը կարող է թույլ տալ անդամ պետությանը իրականացնել ընտրանքային հետազոտություն՝ օգտագործելով առանձին ենթա-ընտրանքներ:

3. Անդամ պետությունները պետք է տրամադրեն տեղեկություններ Հավելված V-ում գրված գյուղատնտեսական արտադրության մեթոդների բնութագրի վերաբերյալ:

4. Ուսումնասիրված յուրաքանչյուր տնտեսության համար, անդամ պետությունները պետք է տրամադրեն տնտեսության ոռոգման ջրի քանակի հաշվարկը (խորանարդ մետրով): Հաշվարկը կարելի է կատարել մոդելի տեսքով:

5. Հանձնաժողովը պետք է տրամադրի անդամ պետություններին մեթոդաբանական և այլ տիպի աջակցություն՝ պարագրաֆ 4-ում պատկերված մոդելը կառուցելու համար: Ի լրումն դրան, Հանձնաժողովը պետք է խթանի անհրաժեշտ համագործակցությունը և փորձի փոխանակումը անդամ պետությունների միջև՝ համադրելի արդյունքներ ստանալու համար:

6. Եթե անդամ պետությունները որոշեն, որ բնութագիրն ունի ցածր կամ զրո գերակշռություն, բնութագիրը կարող է հանվել տվյալների հավաքագրումից: Այդ անդամ պետությունը պետք է տեղեկացնի Հանձնաժողովին անմիջապես հետազոտության տարուն նախորդող օրացուցային տարվա մեջ ցանկացած բնութագրի վերաբերյալ, որը հանվել է տվյալների հավաքագրումից:

7. Բնութագրի սահմանումները պետք է ընդունվեն համաձայն Հոդված 15(2)-ում նշված կանոնակարգման ընթացակարգի:

8. Հաշվետու ժամանակահատվածը պետք է համընկնի այն հաշվետու ժամանակահատվածների հետ, որոնք օգտագործվում են 2010 թվականին անցկացրած գյուղացիական տնտեսությունների հետազոտության բնութագրի համար:

9. Սույն հետազոտության արդյունքները պետք է կապվեն 2010 թվականին անհատական գյուղացիական տնտեսությունների մակարդակով գյուղացիական տնտեսությունների հետազոտությունից ստացված տվյալների հետ: Միավորված վավերացված տվյալների շարքը պետք է փոխանցվի Հանձնաժողովին էլեկտրոնային տարբերակով ոչ ուշ քան մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

10. Հանձնաժողովը պետք է որոշի հետազոտության տվյալների փոխանցման ձևաչափը:

11. Գյուղատնտեսական արտադրության մեթոդների մասին տվյալները չպետք է օգտագործվեն Հանձնաժողովի կողմից ընտրանքներ կազմելու կամ հետազոտություններ իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ IV

ԶԵԿՈՒՅՑՆԵՐ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հոդված 12

Զեկույցներ

1. Ազգային մեթոդաբանական զեկույցները պետք է տրամադրվեն անդամ պետությունների կողմից սույն Կանոնակարգով իրականացվող հետազոտությունների համար, նկարագրելով՝

(ա) կազմակերպումը և կիրառված մեթոդաբանությունը,

(բ) սույն Կանոնակարգին վերաբերող ընտրանքային հետազոտությունների համար ստացված ճշգրտության մակարդակները,

(գ) օգտագործված ցանկացած ադմինիստրատիվ աղբյուրների որակի մասին տեղեկատվություն, և

(դ) ներառման և բացառման չափանիշները, որոնք կիրառվում են Հոդված 3-ում սահմանված ընդգրկման պահանջները բավարարելու համար:

1. Ազգային մեթոդաբանական հաշվետվությունները պետք է ներկայացվեն Հանձնաժողովին վավերացված հետազոտության արդյունքների հետ միասին՝ համաձայն Հոդված 9(1) և (2)-ում սահմանված վերջնաժամկետների:

2. Ի լրումն ազգային մեթոդաբանական հաշվետվությունների, որոնք պահանջվում են յուրաքանչյուր հետազոտության վերջում, անդամ պետությունները պետք է տրամադրեն Հանձնաժողովին ցանկացած տեղեկատվություն, որը կարող է պահանջվել՝ կապված հետազոտության կազմակերպման և մեթոդաբանության հետ:

Հոդված 13

Համայնքի աջակցությունը

1. Անդամ պետությունները պետք է ստանան Համայնքից առավելագույն ֆինանսական աջակցություն, սույն Կանոնակարգով սահմանված իրականցվող հետազոտությունների արժեքի 75%-ը, որը համարվում է առավելագույն գումար՝ սահմանված ըստ պարագրաֆներ 3 և 4-ի:

2. Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահից սկսած Հանձնաժողովը պետք է տրամադրի անհրաժեշտ տեխնիկական և խորհրդատվական աջակցություն՝ կապված այն անդամ պետությունների գյուղացիական տնտեսությունների արբանյակային ճանաչման հետ, որոնք ներկայացրել են հայտերը:

3. 2010 թվականին գյուղացիական տնտեսությունների հետազոտությունների միացյալ արժեքների համար և գյուղատնտեսական արտադրության մեթոդների հետազոտության համար, Համայնքի աջակցությունը պետք է սահմանափակվի առավելագույն գումարով, ինչպես նշված է ստորև՝

— 50.000 EUR յուրաքանչյուրին՝ Լյուքսեմբուրգին և Մալթային

— 1.000.000 EUR յուրաքանչյուրին՝ Ավստրիային, Իռլանդիային և Լիտվային:

— 2.000.000 EUR յուրաքանչյուրին՝ Բուլղարիային, Գերմանիային, Հունգարիային, Պորտուգալիային և Մեծ Բրիտանիային

— 3.000.000 EUR յուրաքանչյուրին՝ Հունաստանին, Իսպանիային և Ֆրանսիային

___ 4.000.000 EUR յուրաքանչյուրին՝ Իտալիային, Լեհաստանին և Ռումինիային և,

___ 300.000 EUR յուրաքանչյուրին՝ բոլոր այլ անդամ պետություններին:

4. 2013 և 2016 թվականներին տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների համար առավելագույն գումարը, որը սահմանված է պարագրաֆ 3-ում, պետք է կրճատվի 50%-ով:

5. Համայնքի ֆինանսական աջակցությունը տրամադրվում է Եվրոպական Գյուղատնտեսական Երաշխավորման Հիմնադրամի կողմից ըստ Կանոնակարգի (ԵԽ) No 1290/2005, Հոդված 3(2), կետ (ե):

Հոդված 14

Ֆինանսական շրջանակներ

1. Հետազոտությունների սույն ծրագրի իրականացման ֆինանսական փաթեթը, ներառյալ տվյալների բազաների համակարգերի կառավարումը, տեխնիկական սպասարկումը և մշակումը, որոնք օգտագործվում են Հանձնաժողովի սահմաններում սույն Կանոնակարգի համաձայն անդամ պետություններից ստացվող տվյալների մշակման համար, պետք է լինի 58.850.000 EUR, 2008-2013 տարիների ժամանակահատվածի համար:

2. 2014-2018 թվականների համար գումարը պետք է ամրագրվի բյուջետային և օրենսդրական իշխանությունների կողմից 2014 թվականից սկսվող նոր ժամանակահատվածի համար նոր ֆինանասական շրջանակներ ստեղծելու վերաբերյալ Հանձնաժողովից առաջարկի ստացման հիման վրա:

3. Տարեկան համապատասխանեցումները պետք է լիազորվեն բյուջետային իշխանությունների կողմից ֆինանսական շրջանակների սահմաններում:

Հոդված 15

Հանձնաժողով

1. Հանձնաժողովը պետք է աջակցություն ստանա Գյուղատնտեսության Վիճակագրության Կոմիտեի կողմից, հիմնադրված ըստ Կանոնակարգի 72/279/EEC:

2. Պետք է կիրառվի այն տեղերում, որտեղ հղում է կատարվում Հոդված 5 ա(1) մինչ (4) և Հոդված 7, որոշում 1999/468/EC, հաշվի առնելով Հոդված 8-ի դրույթները:

Հոդված 16

Շեղումներ

1. Հոդվածներ 6(1) և (2), 8, 9(1), 11(8) և (9), 13(3), Հավելված III և Հավելված IV, շեղումների ձևով, 2010 թվականի հղումները պետք է փոխարինվեն 2009 թվականի հղումներով՝ Հունաստանի, Իսպանիայի և Պորտուգալիայի համար:

2. Հոդված 9(1)-ից շեղումներ, 2012 թվականի մարտի 31-ի հղումները պետք է փոխարինվեն՝

(ա) 2011 թվականի մարտի 31,

Հունաստանի և Պորտուգալիայի համար

(բ) 2011 թվականի Հունիսի 30,

Իսպանիայի համար,

(գ) 2012 թվականի Հունիսի 30,

Իտալիայի ու Ռումինիայի համար:

3. Հոդված 11(9)-ից շեղումների ձևով,
2012 թվականի դեկտեմբերի 31-ի հղումները պետք է փոխարինվեն 2011 թվականի դեկտեմբերի 31-ով, Հունաստանի, Իսպանիայի, Պորտուգալիայի համար:

Հոդված 17

Ուժը կորցնելը

1. Կանոնակարգ (EEC) No 571/88 պետք է ճանաչվի ուժը կորցրած:

2. Փոփոխված Կանոնակարգի հղումները պետք է կազմվեն որպես հղումներ սույն Կանոնակարգին:

Հոդված 18

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգը պետք է ուժի մեջ մտնի ԵՄ Պաշտոնական Ամսագրում հրապարակումից հետո 20-րդ օրը:

2. Այն պետք է կիրառվի 2009 թ.-ի հունվարի 1-ից:

Սույն Կանոնակարգը պետք է ամբողջությամբ պարտադիր բնույթ կրի և ուղղակիորեն կիրառվի բոլոր անդամ պետություններում:

Ստրասբուրգ, նոյեմբերի 19, 2008

Եվրոպական Խորհրդարանի համար

Նախագահ

Հ. Պոտերինգ

ԵԽ –ի համար

Նախագահ

Յ.Պ. Ժուե

ՀԱՎԵԼՎԱԾ I

Գյուղացիական տնտեսությունների սահմանման մեջ ներառված գյուղատնտեսական աշխատանքների ցանկը

Հետևյալ աշխատանքները (որոնք կարող են լինել թե առաջնային և թե երկրորդական) հիմնվում են մշակաբույսերի ու անասունների արտադրության, որսորդության և այլ նմանատիպ ծառայությունների համար սահմանված Տնտեսական Գործունեության Եվրոպական Վիճակագրական Դասակարգման վրա (NACE Rev. 2), և օգտագործվում են սահմանելու համար գյուղացիական տնտեսությունը՝

Աշխատանքի նկարագիրը	NACE Rev. 2 ծածկագիր	Գյուղատնտեսական աշխատանքները սահմանելիս ներառված կամ բացառված աշխատանքների մասին լրացուցիչ գրառումներ
Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում	01.1	
Բազմամյա մշակաբույսերի աճեցում	01.2	Այն գյուղացիական տնտեսությունները, որոնք զբաղվում են գինու կամ ձիթապտղի յուղի արտադրությամբ հենց իրենց իսկ արտադրած խաղողից կամ ձիթապտղից ներառվում են սույն Կանոնակարգի շրջանակներում:
Տնկիների բազմացում	01.3	
Անասնաբուծություն	01.4	Բոլոր աշխատանքները դասակարգվում են ըստ 01.49 NACE Rev. 2-ի (այլ անասունների բուծությամբ) պետք է բացառվեն սույն Կանոնակարգի շրջանակներից, բացի՝ (i) ջայլամների, էմուների, նապաստակների բուծություն և բազմացում, (ii) մեղվաբուծություն, մեղրի և մեղրամոմի արտադրություն
Խառը տնտեսություն	01.5	
Գյուղատնտես. օժանդակող աշխատանքներ, հետբերքահավաքի մշակաբույսերի աշխատանքներ	01.6	Ընդհանուր առմամբ բոլոր տնտեսությունները, որոնք իրականացնում են գործունեություն ըստ 01.6-ի, NACE Rev. 2, հանվում են սույն Կանոնակարգից, եթե դրանք բացառություն են: Այնուամենայնիվ, տնտեսությունները, որոնք միայն պահում են գյուղատնտեսական նշանակության հողեր գյուղատնտեսության և բնապահպանության լավ պայմաններում (ըստ 01.61, NACE Rev. 2) ներառվում են սույն Կանոնակարգում:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Գյուղատնտեսական կառուցվածքի և գյուղատնտեսական արտադրության մեթոդների ուսումնասիրությունների շեմեր

Բնութագիր		Շեմ
Օգտագործված գյուղատնտ. տարածք	Վարելահող, տնամերձ հողամաս, մշտական վարելահողեր, մշտական մշակաբույսեր	5 հա
